ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» նոյեմբերի 2013թ. N__-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ ՄՀԵՐ ՆԱՎՈՅԱՆԻՆ ԲՆԱԿԱՐԱՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ. 580-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Սիսակյան փողոցի հ.22 շենքի հ.89՝ 62.77քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 15.05.2013թ. հ.15052013-01-0095 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Մհեր Նավոյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

<< ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ ՄՀԵՐ ՆԱՎՈՅԱՆԻՆ ԲՆԱԿԱՐԱՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

<<Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիա>> ՊՈԱԿ-ի ռեկտոր, պրոֆեսոր Շահեն Շահինյանը և Հայաստանի Երաժշտական ընկերության նախագահ, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի վոկալ-տեսական ֆակուլտետի դեկան, խմբավարության և սիմֆո-դիրիժորության ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, <<Մովսես Խորենացի>> մեդալակիր Դ.Ղազարյանը միջնորդագիր են ներկայացրել Երևանի քաղաքապետարան՝ երաժշտագետ Միեր Ռաֆիկի Նավոյանին բնակարան նվիրելու խնդրանքով։

Հարկ է նշել, որ Միեր Նավոյանը հանդիսանում է Հայաստանի երաժշտական ընկերության վարչության անդամ, ակտիվորեն իրականացնում է երաժշտագիտական գործունեություն՝ իր փորձն ու գիտելիքները փոխանցելով նաև երիտասարդ սերնդին։

Վերջինս Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր է, ունի արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան, արժանացել է ՀՀ արվեստի վաստակավոր գործչի բարձր կոչմանը։

Մշտապես բնակվելով Երևանում, ցավոք ունի բնակարանային պայմանների խիստ կարիքավորություն։

Հաշվի առնելով Միեր Նավոյանի մասնագիտական կարողություններն ու մարդկային որակները, ինչպես նաև բնակարանային պայմանների բարելավման խիստ անհրաժեշտությունը, ստեղծագործելու համար պայմաններ ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել Սիսակյան փողոցի հ.22 շենքի հ.89 բնակարանը նվիրել նրան, որը թույլ կտա արվեստի վաստակավոր գործչին լիարժեք ստեղծագործական գործունեություն ծավալել։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<< ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ ՄՀԵՐ ՆԱՎՈՅԱՆԻՆ ԲՆԱԿԱՐԱՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Հայաստանի Հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ Մհեր Նավոյանին բնակարան նվիրելու մասին>> որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<< ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ ՄՀԵՐ ՆԱՎՈՅԱՆԻՆ ԲՆԱԿԱՐԱՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Հայաստանի Հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ Մհեր Նավոյանին բնակարան նվիրելու մասին>> որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ